

Թադևոս Ա. Խաչատրյան
Բանաս.գիտ. թեկնածու

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ. ԲԱՆԱՍՏԵՂԾԸ, ՏԵՍԱԲԱՆՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԸ

Ծննդյան 75-ամյակի առիթով*

Բանալի բառեր – Պոեզիա, գոյաբանություն, դասական, տեքստ, մշակույթ, լեզու, ինքնություն, ընթերցում, կողմնորոշում, ժամանակ, փիլիսոփայություն, մոդեռնիզմ, գիտություն:

Մուտք

Եթե չլիներ պոեզիայի գոյության փաստը, հազիվ թե հնարավոր լիներ տրամաբանորեն ենթադրել նրա գոյությունը: Գոյաբանական և ծագումնաբանական այսպիսի առեղծվածայնությունն ու ինքնակոչությունը, հակառակ տարածված պատկերացումների, տեսականորեն նրան դարձնում է անբացատրելի: Լինել ինքն իր պատճառը, լինել ինքնաբավ այն դեպքում, երբ կեցությունն ինքը կարծես թե ինքնաբավ չէ, համաձայնեք, չափազանց լուրջ հայտ է:

Հայ պոեզիան Հայաստանի սահմաններից դուրս ճանաչված չէ, ինչքան մենք կցանկանայինք, և գնահատված չէ, որքանով արժանի է: Այս հանգամանքը մի տեսակ թեականություն է հաղորդում մեր ասելիքին և սահմանափակում ցանկալի խոսք ասելու հնարավորությունը՝ հատկապես այն պարագաներում, երբ գործ ունենք իսկական բանաստեղծության հետ: Ազգային բազում բարդություններից մեկը, որ օրըստօրե աղետալի է դառնում: Մինչդեռ սեփական մշակույթը պետք է հեղինակություն լինի նրանց համար, ովքեր կրողն են այդ մշակույթի, հակառակ դեպքում օտար մշակույթի անխոչընդոտ ներխուժումը անխուսափելի է:

Մշակույթի վիճակը որոշվում է լեզվական ինքնառեֆլեքսիայի մակարդակով. ինչքան բարձր է այն, նույնքան թույլ է նրա ընկալման հնարավորությունը, ուստի այստեղ երբեմն ներկայացնելու ենք մեր եզրակացությունները, բայց ոչ վերլուծությունների ընթացքը:

Աշխարհում չափանիշ չի ստեղծվում, հետո՝ գրականություն, այլ գրա-

Է. (ԺԳ) փաթիլ, թիվ 4 (52) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015
վ.վ. համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.10.2015:

կանություն է ստեղծվում, ապա՝ չափանիշ: Նույնիսկ ԽՍՀՄ-ին դա լիովին չհաջողվեց: Սակայն խորհրդահայ գրականության ժամանակակից գրականագիտական գնահատականներում ստեղծագործության արժևորումը կատարվում է ըստ խորհրդային երկրի հանդեպ ունեցած գրողի այլախոհության աստիճանի: Հետաքրքիրն այն է, որ այս դրույթը հատկապես առաջ են քաշում նրանք, ովքեր ժամանակին առաջին հատկանիշ էին համարում հենց գրողի՝ երկրի հանդեպ գաղափարախոսական հավատարմությունը: Սա նշանակում է, որ գրականության ըմբռնման և գնահատման հարցում անկախ Հայաստանում առանձնապես ոչինչ չի փոխվել, մինչդեռ, երբ փոխվում է իշխանությունը, ենթադրելի է, թե պիտի փոխվի նաև իմացությունը: Ամենևին չկարծելով, թե այս դրույթը լիովին ձիշտ է, կարծում եմ, որ Հայաստանում պարզապես իշխանությունը կամ, որ նույնն է՝ իշխանության նկատմամբ վերաբերմունքը չի փոխվել, ուստի և չէր կարող փոխվել նաև իմացությունը՝ լինի այն գրականության ըմբռնում, թե գնահատման չափանիշ:

Դեռ Պլատոնին էր հայտնի, որ իշխանությունից բացարձակապես անկախ իմացություն չի լինում, սակայն դա դեռևս չի նշանակում, թե իշխանությունն ու իմացությունը խստորեն շաղկապված են¹: 20-րդ դարի 60-80-ական թթ. մեզանում ծավալված գրական բանավեճերը, որոնք ետին թվով գաղափարախոսական են համարվում, իրականում գուտ գրական էին, իսկ գաղափարախոսական ելակետ ունեցողները դա օգտագործում էին որպես շանտաժի և հաշվեհարդարի ձև: Գրական այլախոհությունը վտանգավոր չէ: Գրականությունը վտանգավոր է դառնում, երբ այն ներքնապես փոխում է համակարգում գերիշխող գրական դիսկուրսը (խոսքը): Իսկ անցած հարյուրամյակի մեր պոեզիայում դիսկուրսի փոփոխության երեք առանցքային դեպք կարելի է առանձնացնել, որոնք շատ ավելի էական են, քան այլախոհությունը: Այսպես, **Տերյանի և Մեծարենցի հայտնությամբ վերջնականապես լուծվում է ողջ 19-րդ դարում պատմություն-բանաստեղծություն կոնֆլիկտը հոգուտ բանաստեղծության: Սևակի հայտնությամբ լուծվում է անհատ-կոլեկտիվ կոնֆլիկտը հոգուտ անհատականության:** Եվ այս անձնականության ու հզոր Եսի առկայությունն է, որ նրան չեն ներում մինչև օրս: Երրորդ դեպքը արդեն վերաբերում է **հետսևակյան շրջանին, երբ մերժվում է Եսը՝ հոգուտ ինքնության,** այսինքն, երբ, Ազամբենի խոսքերով՝ **բանաստեղծությունները ծնվում են սուբյեկտի կողմից և ոչ թե անհատականության:** (Անշուշտ, կարելի է առանձնացնել նաև խոսքի խորհրդային մոդելը, սակայն դա խոսակցության առանձին նյութ է):

Ըստ էության մեր մշակույթին շատ ավելի բնորոշ է ինքնահաղորդակց-

1 Հ. Էդոյանը իր մի հարցազրույցում նկատում է. «Ցավոք սրտի, պիտի ասեմ, որ հիմա մեր երկրում ապրող մարդն ինչ-որ չափով դեգրադացիա է ապրում՝ մտավոր, հոգեկան առումով: Շատ արժեքներ արժեզրկվում են, մարդկային արժեքներ կան, որոնք միշտ պետք է գոյություն ունենան, ավելին՝ պետք է զարգանան, բայց մեզ մոտ մի քիչ հակառակ ընթացք է: Հավանաբար, դա էլ է անխուսափելի, մի ամբողջ համակարգ է փոխվել, մեր ժողովրդի հոգեբանությունը սոցիալիստական է ի վերջո, հիմքերը սոցիալիստական են, և այդ հիմքերի վրա կապիտալիստական հարաբերություններ են բարձրանում, հակասություն է ստեղծվում: ...Երկու տարբեր ֆորմացիաների հակադրություն կա մեր երկրում՝ սովետական սոցիալիստական և ժամանակակից կապիտալիստական» («Գրանիշ», **Գրական համայնք**, 17.09.2013):

2 Տե՛ս **Ագամբեն Ժ.** Искусство, без-деятельность, политика, «Социологическое обозрение». 2007, том 6, N 1, с. 42.

ման, «Ես»↔«Ես» համակարգը, որը սովորաբար ուժեղացնում է ոչ թե հաղորդակցման տարածական տեղափոխման եղանակը, այլ ժամանակային: Սակայն հայկական հաղորդակցական համակարգի այս եղանակը տարբերվում է ինֆորմացիայի տեսության մեջ մշակված եղանակից:

Ինչ խոսք, այդ դեպքում ժամանակ առ ժամանակ ուժգնանում է հաղորդման հոգևոր ակտիվությունը, բայց մշակույթը կորցնում է դինամիզմը, արագ արձագանքելու ունակությունը: **Սա հետևանքն է կեղծ «արևելականության», երբ ազգային մշակույթը, շուրջ 1500 տարի խարսխված լինելով քրիստոնեական, որով և՛ եվրոպական ավանդույթների վրա, միտվում է ոչ թե ապագայի մտակերտմանը, ինչով առանձնանում է արևմտյան մշակույթը, այլ դառնում է հետահայաց՝ այնտեղ հայտնաբերելով միմիայն անցյալի արժեքների փշուրներ և դրանք ստուգապես չվերլուծելով իր իսկական արժեքների դիրքերից՝ կորցնում է նաև ներկայի զգացողությունը:** «Ոչ մի մշակույթ,-նշում է Էդոյանը,- չի սնվում ինքն իրենով, հատկապես արևմտյան (կամ քրիստոնեական) ժողովուրդների մշակույթները, որոնք ներթափանցում են մեկը մյուսի մեջ, ազդում են մեկը մյուսի վրա, հարստացնում միմյանց: Ըստ էության, նախ և մակերեսային է այն պատկերացումը, թե իբր փոխներթափանցումները սպանում են ազգային առանձին մշակույթների ինքնությունը: Եվրոպական մշակույթի ամբողջական-միասնական համակարգը չի ոչնչացնում նրա մեջ մտնող մշակույթների ինքնությունությունը... Մշակութային այդ մեծ համակարգի (մակրոհամարգի) մաս է կազմում հայկականը, որը, որպես քրիստոնեական մշակույթ, բնականաբար պետք է մտնի նրա մեջ: Արևմտյան մշակույթի «մեծ տեքստի» հետ բաց հարաբերությունը եղել է մեր մշակութային ներքին կողմնորոշումը, որի վրա Արևելքը միայն ազդեցություն, հաճախ՝ էական ազդեցություն է թողել, բայց ոչ աղավաղելով նրա ներքին «ջիղը», այսպես կոչված՝ «մենտալ օրգանը»»³:

Հենրիկ Էդոյանի համար գրականությունը նախ և առաջ **կազմակերպվածություն է, ապրելու եղանակ, հաստատություն, միակ ձևը, որով հնարավոր է հակադրվել կյանքի քաոսին:** Իսկ որտեղ Կարգն է և կազմակերպվածությունը, այնտեղ հայտնվում է մշակույթը: Կազմակերպել, նշանակում է ուրվագծել այն ժամանակը, որում ապրում ես և տարբերակել այն բոլոր ժամանակներից, որոնք անցել են⁴:

1. Էդոյանը և լեզուն

Լ. Վիտգենշտայնը գրում է. «Մեր լեզուն կարելի է դիտարկել որպես մի հին քաղաք. փոքրիկ փողոցների և հրապարակների, հին և նոր տների, տարբեր դարաշրջանների շինությունների լաբիրինթոսներ, և այդ ամբողջը՝ շրջապատված բազմաթիվ նոր թաղամասերով, ուղիղ փողոցներ՝ կար-

3 Էդոյան Հ. Շարժում դեպի հավասարակշռություն, Եր., «Սարգիս Խաչենց-Փրինսիֆո», 2009, էջ 421-422:

4 Տես Էդոյան Հ. Բանաստեղծություններ, Եր., «Վան Արյան», հատ. 1, էջ 113. /Թեև քաոսից Կարգն է առաջանում, /Բայց Կարգն էլ դառնում սկիզբ Քաոսի.../ ...Մի քիչ անկարգ եղիր, բայց Կարգն իմացիր, /իջիր ներքև, դեպի խորքը մթության./ և հետո լույսերի հեղեղով անցիր... («Պոեզիայի և պոետի մասին»):

գավորված հատակագծերով և տիպային տներով: Իսկ որպեսզի լավագույնս ցույց տրվի, որ միասնության սկզբունքը կամ համադրությունը՝ գիտական մետադիսկուրսի ղեկավարությամբ, անընդունելի է, հարկ է լեզվի «քաղաքը» ենթարկել հավասարության տարանցիկության հին պարադոքսին՝ հարցնելով. «Իսկ որքան տներ կամ փողոցներ են հարկավոր, որ այն սկսի քաղաք համարվել»⁵:

Էդոյանի համար լեզվական այդպիսի հին քաղաքը անընդունելի է: Նրա համար լեզուն նոր քաղաք է, միայն թե առանց բավիղների և հին շինությունների: Նրա քաղաքում դարերը չեն խոսում, այլ ժամանակը: Այսինքն՝ գրական հայերենը, որի վրա աշխատել են վերջին հարյուրամյակում, սակայն որտեղ ոչ թե արտացոլվել է շինարարության ընթացքը, այլ արդյունքը: Նրա լեզվում անհնար է խառնածինություն գտնել, կեղծ և անկեղծ ոճավորումներ: Շատ ավելի հեշտ է մատնացուցել նրա հակոտնյային, որ ժամանակակից բանաստեղծության մեջ Արմեն Շեկոյանն է⁶: Նրա համար լեզուն ինքնին նպատակ չէ: Սրանով նա հակադրվում է բանաստեղծության այն ըմբռնմանը, ըստ որի՝ բանաստեղծությունը նախ և առաջ լեզու է:

Կլասիցիզմի համար պոեզիան աստվածների լեզուն է, ռոմանտիզմի համար՝ սրտի: Ռեալիզմը փոխում է այդ փոխաբերության բովանդակությունը, սակայն պահպանում է բնույթը. արվեստը կյանքի լեզուն է, որի օգնությամբ իրականությունը պատմում է ինքն իր մասին: Էդոյանի համար պոեզիան առհասարակ արվեստների լեզուն է, որով հայտնում է իր գոյության մասին՝ որպես մի այլ աշխարհի: Էդոյանը չի փոխում լեզուն, փորձում է արդեն իսկ մշակութաբանված լեզվով նոր մտքեր ձևակերպել, ուստի նրա լեզուն այն է, որ հնարավորություն է տալիս ձևակերպելու այդ մտքերը:

Որքան էլ տարօրինակ հնչի, հայերենը մտքեր ձևակերպելու համար չէ. այն ամենաստվորական միտքը բանաստեղծականացնում է, և պաթոսը գրեթե անխուսափելի է: Նույն պատճառով հայերենը դժվարությամբ է արձակունակ դառնում, որովհետև բանաստեղծական լեզվից մինչև արձակ միջակայքում պակասում է մի օղակ, որ կարելի է կոչել միջին խոսակցական լեզու:

Հայերենի հիշողությունը խնայողական չէ, այն թողնում է, որ սիրտը խոսի և ոչ թե գլուխը: Այդ պատճառով, որքան էլ տարբեր լինեն ոճերը, հայ բանաստեղծության մեջ մշտապես գերիշխող որակ է ռոմանտիզմը՝ իր այլազան դրսևորումներով: Հայերեն բանաստեղծության մեջ գլուխը քիչ է: Էդոյանի բանաստեղծությունը փորձում է գլուխ լինել մի լեզվում, որտեղ սիրտն է մտածում: Անշուշտ, սրա համար նա թանկ է վճարում. առերևույթ նրա լեզուն զրկվում է ինքնատիպությունից, այսինքն՝ այն, ինչ ընդունված է ինքնատիպություն համարել: Էդոյանի լեզուն անձնական չէ: Այսինքն՝

5 Людвиг Витгенштейн. Избранные работы . М. Издательский дом «Территория будущего», 2005 с. 231.
6 Հմմտ. Ա. Շեկոյանի և Հ. Էդոյանի բանաստեղծությունների «լեզուները».

Փոքրիկ տղան «Շիստոտ» տեսավ,
տեսավ «Շիստոտ» մայլի միջին,
«Շիստոտ» տեսավ, ուրախացավ,
մոտիկ վազեց սիրուն մաշնին:
Սիրուն մաշնին, քնքուշ մաշնին,
սիրուն մաշնին մայլի միջին:
(«Փոքրիկ տղան «Շիստոտ» տեսավ»)

Մինչև կանցնի հիշողության ժամը հին
(որն օրվա մեջ մի կղզի է թվում ինձ),
ես դուրս կգամ իմ օրերի գծերից,
կմոտենամ քո հեռավոր սահմանին:
Իմ աչքերը կհանդիպեն շենքերին,
կխուսափեն գիտակցության ցանցերից....
(«Մոնետների պսակ»)

բանաստեղծությունը որպես այդպիսին գոյություն ունի անկախ լեզվից: Եվ անձնականացվում է հայերենում եզակի լինելու իր հանգամանքով և ոչ թե անհատականությամբ: Այդ պատճառով այնտեղ կարելի է գտնել **ինտելեկտ, միտք, խորություն, բայց ոչ անձնավորություն, ոչ ես: Ես-ն ամենուր է և ոչ մի տեղ: Այն Բացարձակն է: Այլ կերպ ասած՝ Ես-ի իդեան է և ոչ թե ինքը՝ Ես-ը: Մի այլ ձևակերպումով՝ Էդոյանի Ես-ը նախ և առաջ լեզվական արտահայտության փաստ է, այսինքն՝ քերականական, տեքստային միավոր և ոչ թե բուն անձնավորություն, որ Ես ասելով՝ հասկանում է ինքն իրեն:**

Անարտահայտելի բովանդակություն չի լինում: Այլ բան է, որ լեզվի սատանան ուղեկցում է ամենուր, մինչդեռ երբեմն թվում է, թե գործ ունենք Աստծո խոսքի հետ: Մտավոր առօրյան սովորություններից ամենաանսկատելին է: Այն չի կորցնում առարկան, սակայն չի խորանում էության մեջ, այլ պատսպարվում է սեփական իներցիայի շրջագծում: Այն աստիճանաբար ոչնչացնում է մտքի լավագույն որակները: Ինքնագլուխ աշխատող լեզուն մի կաղապար է, որ լավագույնս արտացոլում է Յունգի ասած «կոլեկտիվ անգիտակցականությունը»: Էդոյանի բանաստեղծությունը հակընթաց է և՛ «կոլեկտիվին», և՛ առավել ևս՝ «անգիտակցականությանը»⁷: Մրանով նրա միտքը փոխում է քերականության սովորությունը, թեպետ արտահայտվում է այն նույն կաղապարներով, որոնք վաղուց արդեն ոչինչ չեն արտահայտում, մինչդեռ արդյունքում «ջարդվում» է պոեզիայում հարյուրավոր անգամներ հայտնվող փոխաբերությունների ինքնաբերությունը:

Նրա բանաստեղծությունը, եթե կարելի է այդպես ասել, իր տեսակով «ներքին էմիգրանտություն» է, իսկ հայ բանաստեղծության օրգանականության տեսակետից՝ «մոլորության էներգիայի» կրող, պատրանք, բայց չափազանց արդյունավետ պատրանք: Էդոյանի համար լեզուն անկառավարելի չէ: Այն, ինչ կառավարելի է, ենթարկվում է բանականությանը, ուրեմն նաև ստեղծագործական է: Ճիշտ է, ավանդույթի պես անառարկելի է հնչում, թե բանականությունը չի կարող «օգնել» բանաստեղծականացմանը, սակայն Էդոյանի դեպքում այն անուղղակիորեն նպաստում է ենթատեքստի խորությանը, ընդարձակում ասոցիացիաների դաշտը, հարստացնում տեքստը: Եթե կարելի է այսպես արտահայտվել, նրա բանաստեղծությունը անվերջ երկխոսություն է ժամանակակից մտածողության մակարդակի և ստեղծագործության միջև: Այդ իմաստով նույնպես Էդոյանի բանաստեղծությունը բացառիկ է:

Մշակույթը միշտ պահպանողական է, սակայն գրականությունը չի կարող հեղափոխական չլինել: Մեր գրականությունը մշտապես դիմադրում է իմացության ներխուժմանը գրական տարածք, մինչդեռ Էդոյանի պարագայում այն հիմնական բաղադրիչ է:

7 Տնւ Յոնգ Կ.-Գ. Օբ архетипах коллективного бессознательного, М., «Ренессанс», 1991:

2. Ընթերցում

Էդոյանի բանաստեղծությունը չափազանց հարուստ է ենթատեքստերով, այնքան, որ թվում է, թե տեքստն անհետանում է: Այսինքն՝ հաճախ նրա տեքստը անհասկանալի է, եթե հասկանալի չէ ենթատեքստը: Բանաստեղծության այս որակը նրա գործերին հաղորդում է միստիկականություն, որ կարող է միմիայն ինքն իրենով չբացվել: Սակայն ինտելեկտուալիզմը նրա բանաստեղծության մեկնաբանման բանալին է և ոչ թե հենց բանաստեղծությունը: Առանց ինտելեկտի դժվար է հասկանալ նաև նրա պատկերն ու փոխաբերությունը, թեպետ ինտելեկտուալ փոխաբերությունները հագեցած են զգայականությամբ ու զգացմունքով, որոնք, թվում է, թե շատ ավելի հասկանալի կարող էին լինել:

Ընկալման տեսակետից Էդոյանի տեքստերը երեք կարգի բարդություն ունեն.

ա) տեքստ-ընթերցում հարթության մեջ պակասում է մի օղակ, որ սովորաբար «իրականություն» հեղիեղուկ անունով է հայտնի, այսինքն՝ **ընթերցողի և գրողի ակնարկները չեն համապատասխանում: Բանաստեղծը ակնարկում է մի իրականություն, որ ընթերցողին ծանոթ չէ, բացակայում է սոցիալիզմի ընդհանուր դաշտը,**

բ) **ընթերցողի և բանաստեղծի իմացությունները համազոր չեն.** հեղինակը գիտի բաներ, որ հայտնի չեն ընթերցողին. սա կարելի է կոչել **ինտելեկտուալ անհավասարություն,**

գ) **սոցիալական իրականության բացակայություն:**

Առհասարակ հասկանալու հիմնախնդիրը մեր գրականագիտության մեջ համարվել է ինքնին հասկանալի մի բան և չի դրվել այնպես, ինչպես անհրաժեշտ է, մինչդեռ մեր գրականությունը հասկացվելու խնդիր ունի: Մեր գրականության մեջ հասկացվել է միայն այն մասը, որ անմիջական արձագանքն է իրականության: Գրականության այսպիսի ըմբռնումը գրականությանը պարտադրում է մշտապես մնալ կեցության մակերեսին՝ թույլ չտալով խորանալ գոյության խնդրի մեջ և մտնել մետաֆիզիկական ոլորտ: Հասկանալ տեքստը չի նշանակում է, թե այն կարելի է միայն հարաբերակցել արտատեքստային իրականության հետ, որովհետև որպես այդպիսին կարող է հանդես գալ ոչ միայն իրական աշխարհը, այլև մշակութային տեքստը: Ուստի մեզ մոտ հասկանալու պատրանքն ավելի մեծ արժեք ունի, քան չհասկանալու իրողությունը: Չհասկանալը մի անհաղթահարելի կաղապար է, որով գրականությունը դատարկվում է իր իսկական արժեքից և հայտնվում սովորական իրողությունների շարքում: Չհասկանալ, նշանակում է բացառել ընկալման բանալին, անտեսել այն ինֆորմացիան, որ դրված է բանաստեղծության մեջ որպես բուն բանաստեղծական ինֆորմացիա: Իհարկե, Էդոյանն այժմ ավելի հասկանալի է թվում, քան 30-40 տարի առաջ: Եվ դա մեր ինտելեկտուալ անսովոր առաջընթացից չէ, այլ բանաստեղծական ձևի արտահայտության արդեն սովորական թվացող պատեհությունից: Հակառակ պատկերացման, հիմա էլ ձևի ընկալման սովորականությունն է խանգարում հասկանալ բովանդակությունը: Էդոյանի բանաստեղծությունն, այնուամենայնիվ, դեռևս մեր աշխարհից չէ և մնում է տարաշխարհիկ ներ-

կայություն, որովհետև շատ առումներով նա առաջ է անցել մեր բանաստեղծության բնական զարգացման ընթացքից և միտված է կանխորոշելու ապագա գրական իրողությունները: Բանն այն է, որ մեր ընթերցողական լսարանը այնքան էլ սովոր չէ ինտելեկտուալ ստեղծագործության: Ինտելեկտուալ ասելով՝ չպետք է այն շփոթել «հարուստ մտքերով» ստեղծագործության հետ: Գիրքը կարող է ինչքան հնարավոր է հարուստ լինել մտքերով և բովանդակալից, սակայն տեքստի մակարդակում ինտելեկտուալ չլինել: Ինտելեկտուալ է այն տեքստը, որի լեզուն պահանջում է վերծանում, որ հագեցած է ակնարկներով, խորհրդանշական հղումներով, երկինաստությանը և պարադոքսներով: Էդոյանի բանաստեղծությունը հենց այդպիսին է: (Այստեղ ավելորդ չեմ համարում նշել հայ բանաստեղծության մի հատկանիշ, որը, ըստ էության, կարելի է պարադոքսալ համարել. այն իր ինտելեկտուալ հագեցվածությամբ ակնհայտորեն գերազանցում հայ արձակին):

Երբ բանաստեղծը «իջնում» է բառեր որոնելու, ապա միմիայն նրա համար, որպեսզի դրանք հասկանալի լինեն եթե ոչ բոլորին, գոնե շատերին: Սա խոնարհության արտահայտություն է: Եվ կարելի ասել, որ այսպիսի խոնարհություններով հայ բանաստեղծությունը չափազանց հարուստ է: Էդոյանը այսպիսի խոնարհություն չունի: Նրա խոնարհման առարկան միմիայն մշակույթն է, այն էլ՝ բարձրագույն դրսևորումներով: Սա նրան մերժելի է դարձնում հենց այն շատերի համար, որոնց թվում է, թե խոսքը պետք է ուղղված լինի հենց իրենց: «Խոնարհումը» հասարակացնում է բանաստեղծությունը: Սա կարելի էր Էդոյանի բանաստեղծական կրեդոն համարել, քանի որ այսպիսի «խոնարհումը» (հասկանալի դառնալու ցանկությունը) ոչ միայն կարող է ոչնչացնել նրա անհատականությունը, այլև բանաստեղծությունը: Սոցիալական լեզվի բացակայությունը նրա բանաստեղծությունը պահում է միայն մշակույթի ոլորտում, այդ պատճառով նրա բանաստեղծությունը բացատրելի է միմիայն մշակութային բանալիներով:

3. Կողմնորոշում

Թվում է, թե Էդոյանի մշակութային կողմնորոշվածությունը դեպի Արևմուտք կարող էր անկյունաքարային դառնալ նաև նրա պոեզիայի համար, եթե Արևմուտքը ավելի քան նյութապաշտական չլիներ: Նույն պատճառաբանությամբ, կարող էր այդպիսին համարվել նաև Արևելքը, եթե նրա ծայրահեղ հոգեկանությունը չնդեր վերացականության: Մի խոսքով՝ նրա **պոեզիայում հատվում են Արևմուտքն ու Արևելքը՝ որպես մշակութային մի հարթություն, որտեղ միակ կապը Խոսքն է:** Այն հարթում է տարբերությունները և հաստատում նույնականությունը: Սրանով նա փաստում է մեր մշակույթի եվրոպականությունը, սակայն առանց խառնածին արևելակաանության, քանզի եվրոպականությունը այլ բան չէ, քան մաքուր քրիստոնեական արժեքներին խարսխված իրողություն: Մյուս մշակութային ակնարկներն էլ են դիտվում և ընկալվում քրիստոնեության միջով և շնորհիվ:

4. Էդոյանը և ժամանակը

Էդոյանն ունի բանաստեղծություններ, որոնց մտավոր, գաղափարական և հոգևոր խորությունը չի չափվում միայն բանաստեղծական խորությամբ: Այստեղ հեղինակը մոտենում է մետաֆիզիկական հայեցողությունների: **Էդոյանի բանաստեղծության մեջ իրականությունը գրեթե չի արձանագրվում: Իրականության և ժամանակի առնչության մասին խոսակցությունները գեղազիտության մեջ տարածում ունեցող ըմբռնումներից ամենակասկածելին են:** Իրականությունը պատկերացում է, որ առերևույթ կողմնորոշվում է ժամանակով, այսինքն՝ արտաքին այն նշաններով, որոնք բովանդակություն են ստանում դարձյալ պատկերացումներով: Էդոյանը մերժում է ժամանակի գծային, անդառնալի բնույթը: Այն «հավերժի անդադրուն պատկերն է» (Պլատոն), որ գոյություն ունի ժամանակից դուրս: Էդոյանի համար, անշուշտ, իրականությունը և ժամանակը գոյություն ունեն, սակայն այն, ինչ մեզ համար (առօրյա գիտակցության մեջ) իրականություն է որպես ժամանակ, նրա համար իդեալական, ճշմարիտ աշխարհն է, որ ներկայանում է որպես բանաստեղծական տեքստի աշխարհ: Ակներև է, որ ժամանակի այսպիսի ըմբռնումը լիովին համապատասխանում է էնթրոպիական և ինֆորմատիվ ժամանակների հակադրության գիտական պատկերացումներին, որտեղ առաջինը երկրային, սատանայական ժամանակն է, երկրորդը՝ երկնային, Աստծո թագավորության ժամանակը: Երբ դադարում է գործել ինֆորմատիվ ժամանակը (Էդոյանի համար, կրկնում ենք, դա տեքստի ժամանակն է), այսինքն՝ Աստված բացակայում է, ապա չի կարող լինել նաև մարդկային ժամանակը («Երեք օր առանց ժամանակի»):

Սրանից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ **նրա շատ գաղափարներ ու բանաստեղծական իրագործումներ գալիս են այն վիթխարի գիտելիքներից**, որ ունի հեղինակը, սակայն այդ ամենը վերածվում է **ներգզացողական խաղի**, Հեսսեի նշանավոր վեպի՝ «Հուլունքախաղի» պարագծած սկզբունքներով. միևնույն մոտիվը խաղարկվում է տարբեր նրբերանգներով: Սա նրա բանաստեղծության հավերժի՝ հարակրկնվող ժամանակի մոդելն է:

5. Միմիայն գրականություն

Չնայած թափված հսկայական ջանքերին՝ մեր գրականությունը դժվարությամբ է դուրս գալիս բանահյուսության խանձարուրից, որպեսզի ազատորեն հնչի անհատի ձայնը: **Էդոյանի գործերում ոչ մի բանահյուսական տարր չկա, գրականություն է, միմիայն գրականություն՝** հենված իր իսկ պարադիգմային, որ մշտապես պահում է մշակութային կերտվածքը: Մինչդեռ մեր գրականությունը առայսօր հենվում է բանահյուսության վրա՝ այն համարելով միակ ազգային հորինվածքը, որի վրա կարող է բարձրանալ գրականությունը: Ընդհուպ լեզվական կակաֆոնիա (խառնադմուկ), որ հիմա, քիչ բացառություններով, տեր-տնօրեն է ժամանակակից հայ գրականության մեջ՝ և՛ արձակում, և՛ պոեզիայում:

Էդոյանը բացառապես ուրբանիստ է, ևս մի հատկանիշ, որով նա

տարբերվում է քաղաքում ապրող՝ մշտնջենական բնապաշտներից ու բարբառախոսներից: **Էդոյանն ինքն է իրեն ստեղծել:** Էդոյանի համար տիպական կարելի է համարել նաև մի հատկանիշ, որ դժվարությամբ է տեղավորվում հայկական ընդունված (և ոչ թե ճշմարիտ) հոգեկերտվածքի մեջ. կամք առ իշխանություն: Անշուշտ, սա բոլոր ստեղծագործողների թաքուն և անթաքույց հատկանիշն է և Էդոյանի դեպքում նույնպես բացահայտ չէ, սակայն ներքուստ ընդգծված է: Այն հաստատական է, բայց ոչ պարտադրական: **Սա տիպիկ ինտրովերտի հատկանիշ է, որը ինտելեկտով է «նվաճում» իրականությունը և ոչ թե «իշխանությամբ»:**

Հնարավոր է ձշտել և սահմանել Էդոյանի ինտելեկտը, հնարավոր չէ սահմանել նրա անհատականությունը: Այն ազատ է: Թերևս այդ իմաստով հայ գրականության մեջ նրան հավասարը չկա. **նա ազգային է, այդ հասկացության չաղավաղված, չստորացված ու չգաղափարախոսականացված իմաստով, միաժամանակ՝ միայն ազգային լինելուց ամենաչապականվածը:** Նա գրական լեզվի բացարձակապես մշակված տարբերակի ասպետն է:

6. Էդոյանը և փիլիսոփայությունը

Էդոյանի բանաստեղծությունը վիթխարի նշանակություն ունի ժամանակակից բանաստեղծության իմացաբանության ըմբռնման համար: **Նրա բանաստեղծություններից շատերը մեղիտացիաներ են:** Բանականությունը կեցության քառսի այլընտրանքն է, ուստի և՛ Կարգի հաստատումը: Սովորաբար բանականությունը շատերին կաշկանդում է, սակայն Էդոյանի համար այն ազատության միակ ձևն է: Ինչը կարող է ավելի ազատ լինել, քան միտքը: Հեգելից սկսած՝ կարծում են, թե ազատությունը անհրաժեշտության գիտակցումն է: Սակայն Էդոյանի համար ազատությունը գիտակցում է առանց անհրաժեշտության. այն բացակայություն է, և այստեղ գիտակցությունը քիչ տեղ է զբաղեցնում:

Որպես անհատականություն՝ **Էդոյանը զուրկ է եսասիրությունից:** Այս հարթության մեջ նրա անհատականության ծանրության կենտրոնը անվերջ փոխվում է Ես-ից դեպի ինքնություն, մարդուց՝ Աստծուն, ինչը նշանակում է Ես-ի անհետացում ու անէացում ինքնության, և մարդու անհետացում Աստծո էության մեջ: Այստեղ Էդոյանը հետևողն է միաժամանակ և՛ արևելյան, և՛ արևմտյան միստիկների: Ռամակրիշնան ասում է. «Բանի դեռ կա եսասիրություն, հնարավոր չէ ո՛չ իմացություն, ո՛չ էլ ազատագրում, իսկ ծնունդներին և մահերին վերջ չկա»⁸: Միայն մարմնականով կամ միայն հոգևորով մարդը չափազանց խոցելի է, և ինքնությունն այդ դեպքում կարող է դառնալ անառարկա, որի մասին դեռ խոսել է Անգելուս Սիլեզիացին.

**Ես գիտեմ. առանց ինձ Աստված մեկ ակնթարթ անգամ չի լինի,
2 լինեմ ես, Նա հոգին իսկույն կփչի⁹:**

8 Александр Л. Д. Тоталитарные секты. Опыт систематического исследования. М. 1999, с. 245.

9 Sŭu Ангелус Силезиус. Херувимский странник (книга 5, стих 282):

Я знаю: без меня не может жить и Бог,

7. Էդոյանը և մոդեռնիզմը

Երբ տիրապետող է դառնում կեղծ մոդեռնիզմը, իսկական մոդեռնիզմը՝ հանձին Էդոյանի, դառնում է դասական: Մեզանում հաճախ են շփոթում մոդեռնիզմն ու ավանգարդը: Չփորձեմ դրանց մասին նոր ձևակերպումներ տալ: Ի վերջո, մոդեռնիզմը ժամանակակից է դարձնում դասականը, նրա հղումը դասականն է, և ենթատեքստը բացահայտվում է դասականով: Մինչդեռ ավանգարդը նույնիսկ ժամանակավրեպ է դարձնում ժամանակակիցը: Ավանգարդը մերժում է և՛ դասականը, և՛ ժամանակակիցը:

Ի տարբերություն մոդեռնիզմի, որ ուղղորդված է ձևի և բովանդակության նորարարության, ավանգարդը նորարարական արժեքների համակարգը առաջին հերթին կառուցում է՝ ելնելով պրագմատիկայից: Սկանդալ և էպատամ՝ ահա ավանգարդի մղումը: Այն պրագմատիկական հանձնառություն է, սուբյեկտի անսովոր վարքի դրսևորում: Սակայն մի բան ակնհայտ է, որ ավանգարդը նոր պոետիկա չի ստեղծում: Էդոյանը մոդեռնիզմից քանդում է առավելագույնը, որ սա կարող է տալ գրականությանը: Նա հարկադրված է իրեն հակադրել բանաստեղծական եղած համակարգերին, հաճախ նաև համակարգի բացակայությանը՝ մոդեռնիզմի դիրքերից, սակայն ոչ երբեք՝ ավանգարդի:

8. Էդոյանը և մշակույթը

Էդոյանի բանաստեղծության ակունքները բազմազան են: Նրա բանաստեղծությունները հաճախ ակնարկում են աղբյուրներ, որոնց **տարածման աշխարհագրությունն ընդգրկում է մշակութային քարտեզի գրեթե բոլոր արեալները**¹⁰, Հին Եգիպտոսից մինչև ժամանակակից երկու Ամերիկաները, Հին Հնդկաստանից ու Հունաստանից մինչև Նոր ժամանակների ռուսական, եվրոպական, չինական ու ճապոնական արվեստի ու պոետիկայի տարրերը¹⁰: Եվ որքանով նրա տեքստերը բաց են դեպի նշյալ մշակույթները, նույնքանով փակ են որպես մեկնաբանության հնարավորություն: Սա է Էդոյանի բանաստեղծության հիմնական պարադոքսը: Նրա բանաստեղծության ոգիսականը չի սահմանափակվում սոսկ Արևելք-Արևմուտք հակադրամիասնականությամբ: («Երկուսի միջև Մի գիծ կա- Խոսքը»): Էդոյանը եվրոպական չափանիշներով քաղաքակրթված մարդն է, որի առաքելությունն այն է, որ անընդհատ «եվրոպականացնում» է ուրիշներին, ինչպես ժամանակին հույներն էին «հունականացնում» բարբարոսներին, այսինքն՝ դրանով հաղթահարում մյուս մշակույթների սահմանները՝ սեփականելով այն: Էդոյանի պոեզիան հետևողական է և՛ գեղագիտական համակարգով, և՛ պատկերային համակարգով, սակայն այդ հետևողականությունը **մեկ պակասություն ունի. այն չի զարգանում, այլ մշտապես գործում է իր իսկ հեղինակի ստեղծած ավանդույթի մեջ**: Եվ այստեղ արտասովորն այն է, որ, ամբողջապես արևմտյան լինելով (ամերիկյան տարբերակ), նրա բանաստեղծությունը իր այդ անփոփոխության հատկանիշով բացառապես

когда превращусь в ничто, испустит дух и Он.

10 Տե՛ս Էդոյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն, էջ 336:

արևելյան ավանդույթի կրողն է (չինական տարբերակ): Երբ **մարդ պատկանում է մշակութային երկու տարբեր համակարգերի, նա ունենում է երկու կենսագրություն: Էդոյանի դեպքում նույնպես այդպես է:** Մակայն պետք է ասել, որ նրա առաջին և հիմնական, մշակութային կենսագրությունը ճնշում է նրա երկրորդ՝ մարդկային-անհատական կենսագրությանը: Այստեղ բախում չկա, քանի որ **Էդոյանի փիլիսոփայությամբ մարդու անհատական-մարդկային, երկրային կենսագրությունն ընդամենը նրա երկնային-հոգևոր կենսագրության արտացոլանքն է, իսկ երկնային կենսագրությունը մշտապես մշակութային է:** Սա, անշուշտ, յուրատեսակ պլատոնականություն կարելի էր համարել, եթե Էդոյանը չխախտեր բանաստեղծության պլատոնյան ըմբռնման հիմնական սահմանումը, ըստ որի՝ բանաստեղծությունը ոգեշնչված տենդ է, և այն չփոխարիներ արևմտյան մշակույթում ընդունված կարգով՝ բանականորեն սահմանելի դեկարտյան սկզբունքով¹¹: Այդ իմաստով Էդոյանի բանաստեղծությունը, ձևի տեսակետից նոր ուղիներ մատնանշելով հայ պոեզիայի համար, ինքն իր ձևը չի փոխում: Նրան կարելի է համարել պոեզիային հայտնի բոլոր ձևերի հմուտ նորոգիչ, ավելի ձիշտ՝ վերանորոգիչ:

Էդոյանի պոեզիան սկզբունքորեն հակադրված է նաև այն ակունքներին, որոնցից սերվում է: Նրա հերոսը մենակ է, և այդ մենակությունը փարատվում է միմիայն պոեզիայի շնորհիվ: Էդոյանի հատկանիշները գնահատելիս պետք է հաշվի առնել, որ նա ոչ միայն բանաստեղծ է, այլև ուսուցիչ: Նաև պետք է ավելացնել, որ նա՝ որպես ուսուցիչ, շատ ավելի մեծ ազդեցություն կարող էր ունենալ արդի գրականության ձևակերպումներում, քան որպես բանաստեղծ, եթե այն դաշտը, որտեղ նա գործում է որպես բանաստեղծ, մշակութաբանված լիներ այնպես, ինչպես պետք է լիներ: **Մեծ մասշտաբներին սովոր մտածողին բաժին է ընկել գավառական մի դաշտ, որտեղ կարող է խեղդվել ցանկացած հանձար:**

9. Էդոյանը և գիտությունը

Նրա անհատականությունը կարելի է հակիրճ սահմանել այսպես՝ քննադատական սուր միտք՝ գումարած պոետական բացառիկ շնորհ: Էդոյանը գիտնական է, որ պատեհություն ունի բանաստեղծ լինելու, և բանաստեղծ, որ պատեհություն ունի գիտնական լինելու: Անհատականության այս հատկանիշները նրա մեջ հակադրված չեն, որքան էլ առօրյա գիտակցության մեջ պիտի հակադրություն կազմեն: Նրա դեպքում բանաստեղծությունը չի խանգարում գիտնական լինելուն, գիտնականը՝ բանաստեղծին: Հակառակը՝ բանաստեղծը օգնում է ավելի լավ ըմբռնելու ուրիշի բանաստեղծությունը (հայ քննադատության մեջ ավելի հրաշալի վերլուծություններ չկան, քան նրա՝ Դուրյանի ընթերցումները)¹²: Թվում է, թե պետք է նաև գիտնականը օգներ բանաստեղծին, բայց այդպես չէ. նրա գիտնական լինելը չնչին իսկ ազդեցություն չունի նրա բանաստեղծության վրա: Նրա գիտությունն անգամ իմպրովիզացիա է, մաքուր-ինտուիտիվ բացահայտում, այսինքն՝ ստեղծա-

11 Տե՛ս **Դեկարտ Բ.** Сочинения в двух томах, М. , «Мысль», 1989.

12 Տե՛ս **Էդոյան Հ.** , Շարժում դեպի հավասարակշռություն, էջ 383-398, 399-419:

գործական մեկնություն, չնայած այն հանգամանքին, որ նրա կրթությունը բավարար է, որպեսզի «անաշխատունակ» դարձնի ինտուիցիան՝ ստեղծագործության ակունքը: Թվում է, թե արմատի ճանաչումը կարող էր փրկության խարիսխ լինել, եթե ինքնանպատակ չէ: Սակայն Էդոյանը դեմ է պատմությանը, պատմությունը դեմ է Էդոյանին: Երկու դիմություն, որ անլուծելի կարող էր լինել, եթե չլինեիր... մշակույթը: Որքան էլ արտառոց հնչի, մշակույթը պատմության հետևանք չէ, այլ պատմությունն է մշակույթից ածանցվում: Գիտական մի ըմբռնում, որով ամերևույթ մերժելով պատմությունը՝ նրան դնում է մշակույթի գեղեցիկ շրջանակի մեջ («Գիլգամեշի վերադարձը», «Կոլումբոսի նավարկությունը»):

«Ձևը թանկ է նստում», - գրում է Վալերին¹³: Այդ ձևի համար մեր բանաստեղծներից ամենից թանկ վճարում է Էդոյանը: Նախ և առաջ այն պատճառով, որ նրա բանաստեղծությունն ընկալվեց նախապես որպես ձև և չընթերցվեց որպես բովանդակության նոր ձևի արտահայտություն: Մինչդեռ Էդոյանի ողջ բանաստեղծության ընթացքի քննությունը ցույց է տալիս, որ նրա որոնումների առանցքը նոր բովանդակության հայտնաբերումն է, այսինքն՝ նրա բանաստեղծության կենտրոնում իմաստաբանությունն է: Այդ պատճառով մենք այն կոչում ենք **սեմանտիկական ուղղվածության ստեղծագործություն**: Գտնելով լեզվի և ոճի գտարյունը՝ Էդոյանը դրանք բազմապատկում է բազմաթիվ գաղափարներով:

Էդոյանի բանաստեղծություններում ողբերգություն ամերևույթ չկա, քանի որ ողբերգություն չի կարող լինել այնտեղ, ուր բանականությունը գերիշխող է: Այն պահից, երբ անհատական կեցությունը վերածվում է գիտակցության կեցության (կեցության գիտակցություն), անանուն ընթացումների բոլոր հակասությունները վերածվում են մարդկային կյանքի ողբերգական հատկության և ոչ թե արտահայտության:

Թադևոս Ա. Խաչատրյան - հետաքրքրությունների հիմնական առարկան հայ բանաստեղծության ու արձակի ուսումնասիրությունն է («Բանաստեղծության կեցության և գոյության սահմանագծին», «Գրականագիտությունը, գրականությունը, ժամանակը», «Հայկական միֆոլոգիա», «Երկանդամության համակարգը 20-րդ դարի հայ գրականության մեջ» և այլն): Տպագրել է գրականագիտական և հրապարակախոսական հոդվածներ, էսսեներ, գրախոսություններ, թարգմանություններ, պատրաստել, ծանոթագրել, խմբագրել, առաջաբաններ գրել երկու տասնյակից ավելի գրքերի համար:

13 Поль Валери. Поэзия и абстрактная мысль, «Об искусстве», М. «Искусство», 1976, с. 413.

ГЕНРИК ЭДОЯН. ПОЭТ, ТЕОРЕТИК И ИСКУССТВОВЕД

По случаю 75-летия

Тадевос А. Хачатрян

Ключевые слова – Поэзия, онтология, классический текст, культура, язык, сущность, чтение, ориентация, время, философия, модернизм, наука.

К сожалению нельзя сказать, что армянская поэзия широко признана за пределами Армении, во всяком случае настолько, насколько нам бы хотелось. Этот факт придает некоторую условность нашим суждениям. В армянской поэзии прошлого века можно выделить три ключевых изменения дискурса, которые являются намного более значительными, чем инакомыслие. Таким образом, с появлением Теряна и Мецаренца, наконец разрешился конфликт 19-го века между историей и поэзией в пользу поэзии. С появлением Севака разрешился конфликт между индивидуумом и коллективом в пользу индивидуальности. И третье изменение уже касается пост-севакского периода, когда “Я” (ЭГО) отвергается в пользу самости, то есть, когда по словам Агамбена – субъект, а не личность рождает стихи.

Для Генрика Эдояна литература – это прежде всего организованность, образ жизни, основа, единственный способ противостояния хаосу жизни. Для него язык является новым городом, но без лабиринтов и старых зданий. В его городе разговаривают не века, а время.

Истоки поэзии Эдояна разнообразны. Его стихи часто ссылаются на источники, распространение географии которых охватывает практически все ареалы культурной карты. Стихи Эдояна очень богаты подтекстами, настолько, что кажется, что текст исчезает. Культурная ориентация Эдояна в сторону Запада могла бы стать краеугольным камнем для его поэзии, если бы Запад не был настолько материалистичен. По тем же причинам таковым мог бы считаться и Восток, если бы нематериальность последнего не вела к абстракционизму. Одним словом, в его поэзии пересекаются Восток и Запад как культурное измерение, где единственной связью между ними является Слово. Эдоян не принимает линейное представление о времени и его необратимость: “нескончаемая картина вечности”, которая существует вне времени.

Эдоян является исключительным урбанистом, еще одна особенность, которой он отличается от вечных пантеистов и любителей сельских диалектов живущих в городе.

Эдоян сам создал себя. Как мыслитель и личность, поэзия Эдояна имеет огромное значение для понимания гнеосеологии современной поэзии. Многие из его стихов – медитации.

В настоящее время, когда доминирующим становится псевдо-модернизм, настоящий модернизм в лице Эдояна становится классикой.